

ԱԶԱՏԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ Ե. ՕՏՅԱՆԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ե. Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

1887¹ և 1890 թթ. բռնությունների ու շարժերի արդյունքում մթնոլորտում ծնված զանազան ազատագրական խմբակներից կազմակերպվում են հայ ազգային երկու խոշոր կուսակցությունները, որոնց ազատատենչ գաղափարներն իրենց խոր հետքն են թողնում հայ գրականության վրա՝ բերելով ազատության հույսեր և պայքարի ոգի: «Միակ նկատելի երևույթը 1895-են վերջ մանավանդ, հեղափոխական ոգիի զարթոյմն է, որ ջերմ ավերջ մը կը ներարկե ազգասիրական արտահայտություններուն»², — գրում է Մ. Ճանաչյանը:

Ժողովրդին ինքնապաշտպանության նախապատրաստելը, մանավանդ 96-ի շարժերից հետո, հայ քաղաքական ու մտավոր ուժերի համար դառնում է առաջնահերթ, անհետաձգելի խնդիր, որը լայնորեն քննարկվում է մամուլում և իր արծաթաքները գտնում նաև գեղարվեստական գրականության մեջ: Ծ. Օտյանը, որ ականատես էր դարձել շարժերին (ինքը միայն դիպվածով է փրկվել), ինքնապաշտպանության դիմելու համար զենքի է կոչում ժողովրդին, որովհետև ամենաազավորն այն էր, որ բարբարոսության այդ զոհերը մորթվում էին առանց դիմադրության, նույնիսկ՝ առանց տրտունջի, ինչը խոր ու ծանր հետք է թողնում գրողի հոգեբանության վրա:

Դեռևս Վարուժանը, «Ցեղին սիրտը» գրքում անդրադառնալով պատմությանը, Արտավազդին ու Վահագնին³, «Վարդաններու» և «Արշակներու վերածընող շիրիմներին»⁴, վրժառության աստվածուհուն՝ Նեմեսիսին, ձոնած իր բանաստեղծության բնաբանում գրում է. «Պաշտե դահանակե աչքերով Աստվածուհին, ով ժողովուրդը, երբ բռնակալությունները կործանես, կործանես այլևս զինքն ալ, և դուն բարձրացիր իր պատվանդանին վրա՝ շուշան մը ձեռքիդ մեջ»⁵: Օտյանը նույնպես «Լեռնի բանտը» գրքում «զնում է» դեպի հայոց անցյալի փորքերը, փնտրելու ազգի կորած ըմբոստություն ոգին. «Այ պակուցյալ, ջախջախված կը մնամ կորովաբեկ ու անույս... Ամենքն ալ ստրկոտ, բանտի ու ծեծի դարավոր ժառանգության մի անողոր անդամանելի հետևանք են: Ե՞րբ պիտի փշրես իր շղթաները Գողթան երգիչներու Արտավազդը, զոր քաջքերը կապած են Մասիսի մեջ: Կամ՝ «Ահ, ե՞րբ պիտի երևան Թեմիսի լուռ աղչիկները, որ անույս խորություններու մեջ կնստին, որոնք երբեք չեն սխալիր, բան մը չեն մոռնար, արդարությանը կկղռեն ամեն բան ու թափված արյունը կհավաքեն սև անոթներու մեջ, անոնց ահռելի վրեժխնդրությունը պատրաստելով»⁶: Պատահական չէ, որ Մայքլ Առլենը ևս «Դեպի Արարատ» գրքում, երբ «դարձ է կատարում դեպի իր արմատները», ցեղասպանության փաստի հոգեբանական ճնշումից ազատվելու համար սկսում է հայոց պատմության մեջ որոնել հերոսների-հաղթանակածների պատումին զուգահեռ պատմական փաստեր բերելով:

Երեք հեղինակների միմյանցից անկախ այս անհատական ընկալումների գաղափարական ընդհանրությունն ակնհայտ է, որը թելադրված էր հայ

1 Մ. Ճանաչյան, Պատմություն արդի հայ գրականության, Վենետիկ, 1953, էջ 415:

2 Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1986, էջ 94:

3 Նույն տեղում, էջ 84:

4 Նույն տեղում, էջ 71:

5 Ծ. Օտյան, Լեռնի բանտը, Նոր կյանք, Լոնդոն, 1899, թիվ 23:

ազգի գառը ճակատագրից ելք գտնելու, ըմբոստության ոգու վերարթնացման համար՝ հոգևոր ուղիներ որոնելու ցանկությամբ:

«Չես գիտեր ի՞նչ կատաղություն կուգա վրաս, երբ ամեն անգամ կկարդամ «ոչխարի պես ջարդվող հայեր» խոսքերը և ա՛յ կամաց կամաց ջարդվողներն են, որ կ'սկսիմ ատել»⁶,—գրում է Ծ. Օտյանը 1897-ի մայիսի 7-ին, Ա.: Չոպանյանին ուղղած իր նամակում: Հոգեկան այս ապրումներն իրենց դրսևորումն են գտնում նաև «Լևոն թագավորին սուրը» պատմվածքում (1898): Հեղինակն արտաքուստ թվացող անտարբերությամբ, անգամ հեգնանքով է ներկայացնում հերոսին: Իրականում 96-ի ջարդերի շարաշուք տեսարանները (ինչպես է իրեն հետապնդում ամբոխը ու իր հետ փախչող երկուսից մեկին՝ մի խեղճ բեռնակրի, հոշոտում, ապա Ֆրանսիական նավից մի քանի օր շարունակ տեսնում է հարյուրավոր մարդկանց մորթվելը, գիշերով հազարավոր դիերի ծով նետվելը) անշնչելի կնիք էին թողել գրողի անհատականության վրա: Պատմվածքի՝ հոգեպես խեղված հերոսի միջոցով Օտյանը պատկերում է իր հոգեկան ծանր ապրումները: Ավելի ուշ՝ Ադանայի ջարդերից հետո, 1909-ին նա գրում է. «Մեր հիշատակները փոխանակ կարմիրի՝ ե՞րբ սպիտակ պիտի ըլլան, ե՞րբ մեր վերհիշումները արյունոտ պատկերներ ըլլալն պիտի դադարին ու ե՞րբ ետևնիս նայած ատեն ծեցկույան չոր կմախքներ չպիտի ցցվին մեր աչքերու դիմաց... Տասներեք տարի ետքը դեռ կարծես ականջիս մեջ կը թրթռան աղիոտորմ ճիւղերը այդ ապշահար, ինքնակորույս զոհերուն, որոնք առանց ընդդիմության, առանց կռիվի, առանց ինքնապաշտպանության, կը հռնչեին ու կը մեռնեին բիրերու չոր հարվածներուն տակ»⁷:

Հերոսի հետ ունեցած ապրումների ընդհանրությունը՝ բնազդային սարսափը մարդկից, որը վերստին արթնանում է իր մեջ թե՛ Ֆրանսիայի հակահերեկան, թե՛ Եգիպտոսի, ապա նաև Թուրքիայի չալմայավորների զանգվածային ցույցերի ժամանակ, հեղինակին հնարավորություն է բնածուծ ավելի խոր ընկալել ու բնութագրել հերոսի ապրած հոգեկան ցնցումը՝ անզեն մարդկանց ոչնչացման նախճիբը դիտելիս. «Ա՛խ, զե՛նք մը, դանա՛կ, զմեղի՛ մը ըլլա քովս... փայտի կտոր մը ըլլար... բա՛ն մը չիկա»⁸—հուսահատ գոչում է խաչվեճի վարդանը:

Անզեն մորթվող մարդկանց նույն հուսահատ՝ զենքի, ինքնապաշտպանության դիմելու ճիւղ իր դրսևորումն է գտնում Օտյանի այս շրջանում գրված մյուս գործերում, մասնավորապես՝ «Հաշտությունը» և «Աղոթքը» պատմվածքներում, ավելի ուշ նաև երիտթուրքական սահմանադրության օրոք տպագրված հոդվածներում, երգիծական ստեղծագործություններում և վեպերում: «Խելահեղ կնայեի, անկարող, ձեռնթափ կատաղությամբ մը»,—պատմում է «Հաշտություն» պատմվածքի հերոսը, —ինչ կրնայի ընել այդ խումբին դեմ, միամիտակ, առանց զենքի ու սրտիս ցավեն ինքզինքս կուտեի... Ախ, եթե հրացան մը ըլլար ձեռքիս տակ»⁹:

Անգամ սիրած աղջկան փրկելու անկարողության ստորացնող հուշից ազատվելու միակ ելքը հերոսը տեսնում է զենք վերցնելու մեջ: Միանալով Կրետեի հույն հայրենասեր-ապստամբներին, նա պայքարում է թուրքական բռնակալության դեմ՝ դրանով ներելով ինքն իրեն և հոգեպես գրեթե հաշտվելով իր սիրո մղձավանջային հուշի հետ: Այդպես Կրետեի ազատագրման համար հույն հայրենասերներին է միանում և «Աղոթքը» պատմվածքի հերոսը՝ Սերաստացի ծերունին:

Օտյանը հայ ժողովրդի ազատագրության հարցում կարևոր դեր է հատկացնում հայ-հունական քաղաքական համագործակցությանը: Թե որքան լուրջ սպառնալիք էր այդ համագործակցությունը թուրքական կառավարու-

⁶ Արևմտահայ գրողների նամականի, Երևան, 1972, էջ 169.

⁷ Ծ. Օ տյ ա ն, Կարմիր հիշատակ, Հայրենիք, 26. VII. 1969.

⁸ Ծ. Օ տյ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1960, էջ 462.

⁹ Նույն տեղում, էջ 499.

Յյան համար, վկայում է հենց Բ. դռան ցույց տված վերաբերմունքն այդ հարցի Կատմամբ: «Թուրքական կառավարությունը առաջարկել է Կ. Պոլսի հունական դեսպան իշխան Մամբրոկոբդատյին մի կտրուկ պայման. որ Թուրքիան ոչ թե միայն առևտրական գաղնագիր չի կապի Հունաստանի հետ, Թուրքիան ոչ թե միայն առևտրական գաղնագիր չի կապի Հունաստանի հետ, առ միևնույն անգամ Հունաստանի վերաբերմամբ կը սկսե գործադրել մաքսա-յին դիֆերենցիալ տարիֆ, եթե բոլոր հայ գաղթականները չեն աքսորվի յին դիֆերենցիալ տարիֆ, եթե բոլոր հայ գաղթականները չեն աքսորվի յին դիֆերենցիալ տարիֆ».— գրում է «Մշակը» վկայակոչելով հունական «Messenger Հունաստանից».— գրում է «Մշակը» վկայակոչելով հունական «Messenger d'Altenes» թերթի տեղեկությունները¹⁰, «Տավրոսի ու Արարատի ժողովուրդ-ը» թերթի տեղեկությունները¹¹, փոխադասվածության մասին է վկայում նաև էլիզե Ռեկլյուն, որի գրքի հայ թարգմանիչը ծանոթագրություններում ավելացնում է, թե «Հայերը և հույները միացած՝ ուշ թե շուտ կարող են հույս ունենալ հավասարակշռել իրենց թվով օսմանցիներին»:

Օտյանը Աթենքում գտնված միջոցին առաջարկում է Միհրան Երկաթին մի բանախոսություն կարդալ այդ թեմայով՝ «Հույն և հայ հարաբերություն-ները անցյալին ու ներկային մեջ և հետո տեսություն մը ապագային ներկու-նց»¹², որը ջերմ ընդունելություն է գտնում նաև մամուլում: Այդ մասին է վկայում և Օտյանը իր հուշագրության մեջ, գնահատելով այն որպես կարևոր բանախոսություն «ապագայի մա-սին, երբ օր մը Հայաստանն ալ իր շղթաները պիտի փշրեր ու իբրև ազատ պետություն մը դաշնակցի ձեռք պիտի երկարեր Հունաստանի, որպեսզի միասին Արևելքի մեջ իրենց քաղաքակրթիչ պաշտոնը կատարեն»¹³:

Սակայն այդ համագործակցությունը չի կայանում. կազմակերպելով հայ-հունական բարեկամության աջակից, նախարարապետ Տելիյանիսի սպա-նությունը, ապա դիմելով այլ սաղրիչ գործողությունների և օգտվելով ներկու-կողմերի քաղաքական անհեռատես գործունեությունից՝ Թուրքական կառա-վարությունը հաջողվում է սեպ խրել ներկու բարեկամ ազգերի միջև, հեռաց-նելով իրենից հայ-հունական համատեղ պայքարի վտանգը, ինչը հետագա-յում աղետալի հետևանքներ է ունենում թե՛ հայ և թե՛ հույն ժողովուրդների համար: Ավելացնենք նաև, որ հայ-հունական հարաբերությունների խզման ու հակահայկական թշնամանքի օրերին նույնպես Օտյանի «Ազատ բեմը» ակտիվ պայքար էր մղում դրա դեմ՝ ներկու կողմերին կոչ անելով չենթարկ-վել Թուրքական կառավարության հրահրիչ գործողություններին:

Օտյանը մեծ հույսեր էր կապում նաև Կրետեի ապստամբության հաղ-թանակի հետ, որի պարտությունը ծանր էր նրա համար: «Հունաստանն եկած լուրերը այնչափ ընկճեցին զիս, որ, հավատա՛, բան մը գրելու կամ ընելու սիրտ չէր մնացեր վրաս».— գրում է Չոպանյանին, — «...Հուլիսը եթե նորանոր պարտություններ ևս կրեն և ամոթալի հաշտություն մը չ'ընեն, կար-ծեմ մեր գործը տարիներու համար ետ պիտի մնա»¹⁴:

«Աղոթքը» պատմվածքում Օտյանը շարունակում է նախորդ՝ «Հաշտու-թյունը» և «Լևոն թագավորին սուրը» պատմվածքների գաղափարական ուղղվածությունը՝ ինքնապաշտպանության դիմելու և զենքով ազատություն ձեռք բերելու միտքն արծարծելով: Թե որքան արդիական հարց է Օտյանը շոշափում, վկայում է նաև Միհրան Երամյանի՝ Միր Երոյի՝ «Հայ կամավոր-

¹⁰ Մշակ, 24. I. 1902.

¹¹ էլիզե Ռեկլյուն, Հազիստան, Հայաստան և Թուրքիստան, Վաղարշապատ, 1893, էջ 124:

¹² Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 45:

¹³ Նույն տեղում, էջ 46:

¹⁴ Արևմտահայ գրողների նամականի, էջ 168—169:

* Ա. Մակարյանը Միր-Երո կեղծանունը վերադրում է Երուխանին (Երվանդ Սրմաթե-լյանյանին)՝ հայտնի չէ, թե ինչ աղբյուրի վրա հենվելով (տե՛ս Ա. Մակարյան, Երվանդ Օտյան, Նրան, 1965, էջ 182, նույնի՝ Երվանդ Օտյանի կյանքը և հրապարակախոսական գործունեությունը, Երևան, 1977, էջ 47, 70, 71): Իսկ «Արևմտահայ գրողների նամականի»

ներք-հեղինական վերջին պատերազմին մեջ» հոդվածը¹⁵:

«Աղոթքը» պատմվածքի հերոսը, որին հանդիպում ենք Միհրան Երամյանի՝ այդ հոդվածում (ինչպես վկայում է Օտյանը), Սեբաստացի ժերոմին, նախկին հեղափոխականը, կրոնցենտով ողջ ունեցվածքն ու հարազատներին և մազապուրծ փախչելով հայրենիքից, մոլեռանդ աղոթքներով է փորձում խեղդել իր կրած տառապանքների ցավը, բայց ի վերջո ուժ է դանում իր մեջ պայթարեցու. «Լույսը» չէր երևցած անկե ի վեր և Սեբաստացի ժերոմին դիրքը նետած էր ու հրացանը առած»¹⁶։

«Զենքի» և «աղոթքի» այս հակադրությունը հեղինակի մոտ պատահական չէ: Այն կա նաև «Աևտն թագավորին սուրը» պատմվածքում. «Ալույսը մարած՝ մութին մեջ՝ ահուդողով կաղոթեինք. զենք մը չի կար քովերինիս»¹⁷:

«Աղողթք» պատմվածքը մի ինքնուրույն հատված է Օտյանի հուշագրության ներքո, ուր հեղինակը՝ որպես ականատես, պատմում է 1896-ի շարդերից մի կերպ ազատված հայ փախստականների դաժան ողիսականին հաշորդած՝ օրվա մի կտոր հացի կարոտ, անմխիթար վիճակը, և պատկերում, թե ինչպես մղձավանջային ներկան ռապազայի անհայտությունը կրոնական մոլեռանդության են մղում ժողովրդին, և նա զալիքին դիմագրավելու ու դժվարությունները հաղթահարելու համար իր մեջ ուժ գտնելու փոխարեն ժանգաժին հիշատակեն հաբեկ ու զալիք անժանոթեն սարսփած» ապագայի հույս և մխիթարություն է որոնում աղողթքներում¹⁸։

«Աղոթե՛նք, աղոթե՛նք որ Աստված ողորմի մեզի: Այս էր ամենուն վրա տիրող մտածումը: Ա՛լ իրենց մտքին, սրտին ու ջիղերուն գործունեությունը կորսնցուցել էին, ալ կռվելու, տոկալու կորովին չէր մնացել, Հայոց ազատության վրա չէին մտածել, թուրքին կործանումը չէին բաղձար. ա՛լ մոռցել էին ամեն բան, իրենց կնիկները, զավակները, արտերը, գույքերը, իրենց հայրենիքը»¹⁹:

Օտյանը ընդգիշում է կրոնի դեմ, երբ այն և՛երաժվում է իրականությունից փախուստ տալու թարամիդոցի, որը դառնում է ներկան ձողանալու և պայքարից հրաժարվելու համակերպումի հեշտ ճանապարհ: Օտյանին մտահոգողը ազգի ճակատագիրն է, որի համար պետք է պայքարել, պայքարել այսօրվա, «երկրային արքայության» համար. «Այս խաբուսիկ հույսը, եթե կարող եղած է մխիթարել թշվառության ու բռնության տակ հեծողները, մյուս կողմի պատճառ եղած է, որ ստրուկ համակերպությամբ մը գլուխ ծռենք ամեն անիրավությանց, ամեն անարդարությանց հանգեալ... հա՛ա՛ քրիստոնյային հավատքը և այս հավատքը զինքը մղած է ո՛չ միայն անտրտուկ տանելու աշխարհային բոլոր քարոտկան ու ֆիզիկական զրկանքները, այլ հիմարական մոլեռանդությամբ մը, նորանոր զրկանքներ ստեղծելու»²⁰:

Օտյանը ընդունում է քրիստոնեական համամարդկային սիրո փրկա-
փայտթյունը, նա նաև կարևոր է համարում հայ եկեղեցու դերը ազգի գո-
յատևման հարցում (այդ իսկ պատճառով սփւր ըննադատության է ենթար-

գրգռում ծանոթագրության հեղինակները «Միր-Նրո» կեղծանունը սխալմամբ վերագրում են Երվանդ Օտյանին (էջ 411, 495): Որ Միր-Նրոն երվանդ Օտյանը կամ Երուխանը չէ՝ ակնհայտորեն երևում է այս հեղինակների կենսագրական տվյալներից: Օտյանը իր հուշերում գրում է, որ Միր-Կարո կեղծանունով հանգես էին գալիս երկու հեղինակներ՝ Միհրան Երամյանն ու Կարապետ Պիլեգիբեջյանը (Տիգրան Երկաթ): Տե՛ս Ծ. Օ տյ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 22: Այսուհետք դժվար չէ ենթադրել, որ Միր-Նրոն Միհրան Երամյանի առանձին կեղծանունն է, որը հաստատվում է նաև Գարեգին Լևոնյանի գրական կեղծանունների ցուցակով (տե՛ս Գ. Լևոնյան, Երկեր, Երևան, 1963, էջ 458):

15 *Sh'u* նոր կյանք, 1898, էջ 133—134.

16 Ե. Օ տ յ ա ն, Երկերի ժողովածու, Հ. 1. էջ 47:

17 Նույն տեղում, էջ 461:

18 Նույն տեղում, էջ 471:

19 Նույն տեղում:

20 Աղատ բեմ, 1905, թիվ 2,

ևում հայ կրոնավորներին՝ գանելով, որ մարդկային արատները վեր կանգնած մարտիրոսներ պիտի լինեն նահատակվող ժողովրդի հոգևոր հայրերը), բայց գեմ է կրոնական դոգմաներին ու մոլեռանդությանը, սնահավատությանը:

Նույն՝ «գեների» և «աղոթքի» կամ՝ պայքարի և հավատամքի հակադրությունը, առկա է գրողի «Վրեժ» վիպակում (առաջին անգամ լույս է ահաել Նոր կյանքում, 1900, թիվ 2) ուր իր վառ դրսևորումն է գտնում Օտյանի իրարամբոժ զգացումների պայքարը՝ մի կողմից հումանիստ գրողի համար անընդունելի է ատելության զգացումը («Շանթի» այն հարցին, թե որն է իր «ամենեն ավելի ատած բանը» Օտյանը պատասխանում է՝ «Նույն իսկ ատելությունը»²⁴) անհանդուրժելի՝ մարդ սպանելու փաստն ինքնին, մյուս կողմից է՝ շարագործությունների երթը հանդուրժելն ու անպատասխան թողնելը նույնպես առաքինություն կամ բարություն չէ: Այս երկու զաղափարների բախումը Օտյանը մարմնավորում է շարդերի ժամանակ շարագործության զոհ դարձած, բայց ներողամիտ Արշակի, մյուս կողմից՝ շարքը չհանդուրժող և դրա դեմ պայքարող Գարեգինի միջոցով:

Օտյանը, ընդունելով, որ շարագործը պետք է արժանի պատիժ կրի, այնուամենայնիվ, դժվարանում է իր պայքարող և շարիք չհանդուրժող հերոսին մարդասպան դարձնել, առավել ևս՝ փառաբանել մարդաթալանությունը: «Առանձին սենյակի մեջ, առանց անմիջական զրգույնի մը, պաղարյունով ելլել այդ ծերունիին վրա հարձակիլ և սպաննել. տարօրինակ, սոսկալի բան մը կերևար Գարեգինի աչքին:

— Զէ՛, պիտի չկրնամ ընել, կը մտածեր ինքնիրեն:

Ու կը՝ ջանար, քաջալերվելու համար, մտքին առջև պատկերացնել Ավրամին ոճիրը ջարդին ատեն և ցած ու գարշելի ընթացքը Արշակի մորն ու քրոջը նկատմամբ»²⁵:

Երկու զաղափարներից ոչ մեկին վերջնական նախապատվություն չտալով՝ Օտյանը ստեղծում է այնպիսի իրադրություն, որ շարագործը դառնում է իր իսկ ոճրի զոհը: Մ. Ծանաշյանի բառերով ասած՝ «քրիստոնեական ներողամտության և մարդկային վրեժխնդրության զգացումներուն»²⁶ այս հակադրումը մեկ անգամ չէ, որ արծարծվել է հայ գրականության մեջ: Հարցի նման՝ օտյանական լուծումը, երբ հեղինակն արդեն լցանկանալով հակադրվել քրիստոնեական բարության զաղափարախոսությանը, պաշտպանում է նաև շարին հակադրվելու զաղափարը, ավելի հստակ՝ ձևակերպում է ստանում Ավետիս Ահարոնյանի ստեղծագործություններում. խոնարհությունն ու ստրկամիտ համակերպումը տարբեր երևույթներ են՝ առաջինը ըխում է քրիստոնեական համամարդկային սիրուց, վերջինս՝ պարտադրվում ուժով: Բարությունը պարտվածի համբերությունն ու խոնարհությունը չէ, այլ հաղթողի բարյացակամությունն ու մեծահոգությունը: Միայն հաղթողը կարող է բարի լինել կամ չլինել, իսկ պարտվածը պարզապես այլ ելք չունի, նա ընտրության իրավունք չունի: «Մինչև այսօր, երբ մենք միայն բարիք ենք արել, մենք առաքինի ենք եղել, բայց եթե այսօր մենք թույլ տանք, որ շարերն անպատիժ տանեն մեր հոտերը, մեր առաքինությունը կիսատ, անկատար կը լինի»,—ասում է Ահարոնյանի «Մասիսը» (1899 թ.) պատմվածքի հերոսը: Նման դեպքում խոնարհամտությունը ոչ միայն քրիստոնեական բարության հետ ընդհանուր եզր չունի, այլև, ընդհակառակը, դիմացինին մղում է ոճրագործության, դրանով իսկ դառնալով նույնքան անհանդուրժելի: Նկատենք, որ թե՛ Օտյանը, թե՛ Ահարոնյանը մարդասպանությունը չեն փառաբանում, այլ

²⁴ Շանթ, Կ. Պուրիս, 1913, էջ 363:

²⁵ Ն. Օ տ յ ա ն, Երկերու ժողովածու, Բեյրութ, 1935, էջ 113

²⁶ Մ. Ծ ա ն ա շ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 812:

դրվատում են բարու, ճշմարտության և ազատության հաղթանակի համար շարին գիմադրելը:

Ավ. Ահարոնյանի «Մասիսը» գեղարվեստական որոշ ընդհանրություններ ունի Ե. Օտյանի «Այրին» պատմվածքի հետ: «Այսպես նահապետական ընտանիքի երջանկության կողքին հանկարծ անսպասելի կերպով տնկվեց Չարիքը: Մասսի ալերում բուն դրեց մի ավազակային ցեղ և իր սարսափը սփռեց ամեն կողմ»²⁴,—գրում է Ահարոնյանը: Չարի, Չարիքի այս կերպավորումն առկա է և Օտյանի պատմվածքում: «Հոն, վարը, ես էի տերն ու իշխանուհին բոլոր այս գեղերուն, քաղաքներուն, գետերուն ու դաշտերուն,—ասում է «Այրին» պատմվածքի հերոսուհին,—ախ երբոր անոնք իմս էին, քաղքին մեջ սուրով ու դաշտին մեջ սովեն չէին մեռներ, քուրձեր հագած խելահեղ փախստականներ չկային ճամրաներուն վրա, անօրենությունը, անարգանքն ու գարշությունը չէին պղծեր զանոնք, ու պատուհասն ու կործանումը իրենց սրտմտությունը չէին թափեր անոնց վրա... Ու ահա եկավ Չարիքը, մեծ, անդիմադրելի, վախճանական Չարիքը»²⁵: Երկու դեպքում էլ հեղինակներն այլաբանական ձևի մեջ փորձում են ընդհանրացնել հայ ժողովրդի անցած ճանապարհը՝ միաժամանակ ազատության պայքարի կոչելով: [«Այրին» Օտյանի նախորդ երեք պատմվածքների թեմատիկ շարունակությունն է, ուր ասես ի մի են բերվում և ամփոփվում հեղինակի ազատասիրական գաղափարները: Թեև պատմվածքն իր գեղարվեստական արժանիքներով անհամեմատ զիջում է հեղինակի մնացած գործերին, բայց ունի արդիական արժեք՝ իր ժամանակի համար և գնահատելի է հատկապես իր լավատեսությամբ, մանավանդ որ գրվել է ջարդերին հաջորդած հուսալքման շրջանում. «Զէ, պիտի չմեռնինք. ամենք ապրիլ կուզենք... ապրինք, ապրինք»²⁶:

Այսպիսով, գտնելով, որ հայ ժողովուրդն ազատության հույսն իր վրա պիտի դնի, 96-ի ջարդերի անմիջական ազդեցության տակ գրած իր այս պատմվածքներում հեղինակը կոչ է անում ժողովրդին իր մեջ ուժ գտնել՝ պայքարելու թուրքական բռնապետության դեմ մեր անցյալի փառքն ու պետականությունը վերականգնելու համար:

СВОБОДОЛЮБИВЫЕ ИДЕИ В ПРОИЗВЕДЕНИЯХ Е. ОТЯНА

Н. С. АЙРАПЕТЯН

Резюме

После погромов 1896 г. для армянского народа первостепенной стала задача самозащиты, нашедшая отражение и в литературе. В вопросе освобождения армянского народа Е. Отян большое значение придавал армяно-греческому политическому сотрудничеству. В поисках путей духовного возрождения народа писатель обращался к его историческому прошлому, призывая к борьбе против турецкой тирании для восстановления государственности.

²⁴ Ավետիս Ահարոնյան, Երկերի ժողովածու, Թիֆլիս, 1909, էջ 150:

²⁵ Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 483:

²⁶ Նույն տեղում, էջ 493: